

ԿՐԿՆԵՐԵՒՈՅԹ

Կը կանչես նորէն անցեալիս խորէն
Մանչուկ իմ սիրուն, անգէտ ցաւերուն.
Քեզի հետ կ'ուզես բարեկամ զիս հեզ,
Մանչուկ զուարթուն, եկո՛ւր ինծի դուն:

Անհանդարտ խաղիդ, անզգոյժ վազիդ
Հետեիլ առոյգ, օ՛ր ինչ մեծ հաճոյք.
Դէ՛հ, ձեռքդ գողցիկ; տո՛ւր ինծի պզտիկ,
Թող ափքս ըլլայ մատերուդ գահոյք:

Արդեօ՛ք ալ ուժ է, միտս փախչող ինծմէ
Հմայքներդ աննենգ՝ ամուր օղակել
Որ թեւ չբանայ կուրք տենջանքիդ
Դէպ' տար-աշխարհներ, ու ծանծաղ ափեր:

Հիմա կ'զբօսնուս, քիչ վերջ կուտաս խոյս
Բայց առեր էիր դուն ինչքա՛ն խրախոյս
Մանչուկդ իմ անուշ, ձեռքդ ինծի տուր,
— Կեանք, «Մի արգելուր, անոր գալ առ իս...»:

ՋԱԻԷՆ Ա. 2.

